ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գույքային հարաբերությունների արդյունավետ համակարգի ձևավորման ուղիների որոնման նպատակաղրմանը զուգընթաց, տնտեսագիտության ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում հատուկ նշանակություն են ստանում գույքային հարաբերությունների ուսումնասիրության մեթոդական և տեսական հարցերը: Մեր երկրում վերջին 28 տարիների տնտեսական վերափոխումների փորձը ցույց է տալիս, որ դրանց հաջողությունը մեծապես որոշվում է գույքային հարաբերությունների գործառնության ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ հիմքերի ըմբռնմամբ: Ուսումնասիրելով գույքային հարաբերությունների առանձնահատկությունները և բովանդակային փոփոխությունները, հնարավոր է դառնում հասկանալ տնտեսական խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները առանձին երկրներում, ինչպես նաև կանխատեսել իրականացվող բարեփոխումների արդյունքները և բացահայտել երկրների տնտեսական զարգացման ներուժը:

Պետք է նշել, որ վերջին տարիներին գույքային հարաբերությունների պետական կարգավորումը զարգացած և զարգացող երկրներում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, իսկ այդ բնագավառում ձևավորված լուծումները շատ դեպքերում շարունակում են չբավարարել տնտեսական զարգացումների ներկա փուլի պահանջներին: Մասնավորապես, պայմանագրային հարաբերությունների որակական բնութագրիչները և դրանցից առաջացող ռիսկերը, աշխատանքային հարաբերությունների կարգավորման դաշտը և տնտեսական անորոշությունները, տնտեսական հարաբերությունների զարգացման դինամիկան և հարկային վարչարարության արդյունավետության ոչ բարձր մակարդակը և այլ

հիմնախնդիրներ շարունակում են խոչընդոտել ազատ մրցակցությանը և գույքային հարաբերությունների զարգացմանը Հայաստանում:

Ակնհայտ է, որ տնտեսական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում գույքային հարաբերությունների կարգավորման և կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը պահանջում է ժամանակակից նոր մոտեցումներ: Գույքային հարաբերությունների զարգացման, կարգավորման, ինչպես նաև գույքի կառավարման սկզբունքներն ու մեթոդները պետք է հիմնված լինեն խորը տեսական գիտելիքների և գործնական փորձի ներդաշնակ համադրության վրա, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության նպատակը գույքային հարաբերությունների էության, դրանց զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունն է, որի հիման վրա հնարավոր կլինի ցույց տալ ՀՀ-ում գույքային հարաբերությունների բացասական դինամիկան սահմանափակող պետական կարգավորման ուղղությունները: Ատենախոսության նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել «գույք» հասկացությունը և գույքային հարաբերությունները,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների առանձնահատկությունները, որոշել դրանց տեղը հասարակական հարաբերությունների համակարգում, ինչպես նաև գույքային հարաբերությունների տեսանկյունից վերլուծել հասարակական տնտեսական ֆորմացիաների առանձնահատկությունները,
- ✓ ներկայացնել գույքի տեսակների դասակարգումը, ցույց տալ ոչ նյութական օբյեկտների նկատմամբ գույքային հարաբերությունների առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ✓ դիտարկել գույքային հարաբերությունների իրացումը դինամիկայում և առաջարկել այն բնութագրող ցուցանիշներ, հարկային համակարգը դիտարկել որպես գույքային հարաբերությունների զարգացումը կարգավորող գործիք,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման միտումները և դրսևորման նոր ձևերը ժամանակակից տնտեսական պայմաններում,

- ✓ բնութագրել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում և առաջարկել գույքային հարաբերությունների զարգացման պետական կարգավորման ուղղությունները,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացնել նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 165 էջ:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը, հետազոտության տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել է ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Գույքային հարաբերությունների էությունը շուկայական տնտեսության համակարգում» գլխում ուսումնասիրվել են գույքի և գույքային հարաբերությունների տնտեսագիտական բովանդակությունը, ինչպես նաև ներկայացվել գույքի տեսակների բազմակողմ դասակարգումը:

Ատենախոսության երկրորդ՝ «Գույքային հարաբերությունների առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում» գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների իրացման չափումը և կարգավորումը, ինչպես նաև գույքային հարաբերությունների զարգացման միտումները ժամանակակից պայմաններում:

Ատենախոսության երրորդ՝ «Գույքային հարաբերությունների պետական կարգավորումը ՀՀ-ում» գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում, բացահայտվել են գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները, գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացվել է նոր որակի

գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության գիտական արդյունքը կայանում է գույքային հարաբերությունների գիտական հիմնավորված հետազոտության մեջ, որը զարգացնում է գույքային հարաբերությունների բովանդակության, էվոլյուցիայի և դինամիկայի մասին պատկերացումները ժամանակակից պայմաններում: Աշխատանքում գիտական նորույթ պարունակող հիմնական դրույթները հետևյալն են.

1. Հստակեցվել է գույքի և գույքային հարաբերությունների սահմանումը սոցիալ-տնտեսական մեկնաբանման շրջանակներում, որը թույլ է տալիս բացահայտել գույքային հարաբերությունների բովանդակության ժամանակակից ընկալումը:
2. Առաջարկվում է սինթեզված մոտեցում գոյություն ունեցող մեթոդաբանական մոտեցումների՝ պատմական մատերիալիզմի, մեթոդաբանական կոլեկտիվիզմի և մեթոդաբանական ինդիվիդուալիզմի շրջանակներում: Սինթեզի սկզբունքը արտահայտվում է մարքսյան տեսության, ինստիտուցիոնալիզմի և նեոինստիտուցիոնալիզմի դրույթների համադրությամբ:
3. Բացահայտվել և հիմնավորվել է գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի հավասարակշռությունն ապահովող գործիքակազմը դրանց զարգացման գործընթացում: Այն հարկային համակարգի միջոցով իրականացվող պետական կարգավորման միջոցառումների համալիր է, որը ֆիսկալ և վերաբաշխիչ գործառույթների միջոցով հնարավորություն է տալիս պետությանը նվազեցնել գույքային հարաբերությունների զարգացման բացասական կողմերի ազդեցությունը: Որպես գույքային հարաբերությունների իրացման գործընթացի գնահատման ցուցանիշներ, առաջարկվում են սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, որոնք թույլ են տալիս բնութագրելու գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի բավարարման աստիճանը

տարբեր մակարդակներում՝ անձնական-մասնավորից մինչև պետական (ՀՆԱ դինամիկա, աշխատավարձի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ՄԶՀ):

4. Ներկայացվել է գույքային հարաբերությունների ժողովրդավարացման սահմանումը: Գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը տնտեսվարող սուբյեկտների հնարավորությունն է մասնակցելու գույքային հարաբերություններին՝ գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման ձևով, անկախ այն բանից, թե իրավաբանորեն ում է պատկանում տվյալ գույքը, այսինքն, հանրության մեծ մասի ներգրավումը գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման գործընթացին:
5. Բացահայտվել են գույքային հարաբերությունների մի շարք օբյեկտների՝ մտավոր և վիրտուալ (ածանցյալ ֆինանսական գործիքներ) սեփականության իրացման առանձնահատկությունները:
6. Աշխատանքում առանձնացված են գույքային հարաբերությունների զարգացման որակական վիճակները, որոնք ապահովում են անցումը գույքային հարաբերությունների զարգացման հաջորդ մակարդակին:
7. Բացահայտվել են գույքային հարաբերությունների իրացման գործընթացի վրա ազդող պայմանները, որոնք ապահովում են գույքային հարաբերությունների իրացման գործընթացի շարունակականությունը, և դրանով պայմանավորված առանձնացվել են գույքային հարաբերությունների պետական կարգավորման ուղղությունները:
8. Բացահայտվել են գույքային հարաբերությունների զարգացման գործոնները՝ մարդկային կապիտալի, կրթական համակարգի, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, դրանց փոխկապվածությունը և պետական կարգավորման համակարգի հետ փոխկապակցումը:

Ատենախոսությունում ձևակերպված տեսական դրույթներն ու եզրակացություններն ուղղված են ՀՀ-ում գույքային հարաբերությունների պետական կարգավորման գործընթացի բարելավմանը: Հեղինակի առաջարկությունները կարող են օգտագործվել գույքային հարաբերությունների զարգացման և կարգավորման հիմնախնդիրներին վերաբերող հետագա հետազոտությունների համար:

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության երկրորդ գլխում գույքային հարաբերությունների պետական կարգավորման համատեքստում հեղինակը զգալի ուշադրություն է դարձրել ՀՀ հարկային համակարգի կատարելագործմանը, սակայն բավարար չափով չի անդրադարձել հարկերի կառուցվածքին (առանձին հարկատեսակներին) և տեղական բյուջեների կատարելագործմանը:
2. Ատենախոսությունում նվազ ուշադրության են արժանացել պետական գույքի կառավարման և պետական գույքային հարաբերությունների կարգավորման հիմնահարցերը, հատկապես պետություն-մասնավոր հատված գործընկերության համատեքստում:
3. Ատենախոսության 3. 2 ենթագլխում հեղինակը մանրամասն ներկայացրել է գույքային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում: Այս բաժնում կարելի էր անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ գույքային հարաբերությունների զարգացումը համակարգված չէր ամբողջ տնտեսության մասշտաբով, և այն դրսևորվեց հատկապես տնտեսության իրական հատվածում պետական գույքի մասնավորեցման ժամանակ:
4. Աշխատանքում առկա են որոշակի խմբագրական թերություններ: Օրինակ, աշխատանքի առաջին գլխի 1. 2 ենթագլխում գույքի դասակարգման խմբերն ու չափանիշները կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով:

Եզրակացություն

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և համակարգված հետազոտություն է, որը նվիրված է գույքային հարաբերությունների ուսումնասիրմանը, դրանց պետական կարգավորման հիմնախնդիրների և արդյունավետ լուծումների բացահայտմանը, ինչը հեղինակին հնարավորություն է տվել տեսական եզրահանգումներ և գործնական

առաջարկություններ կատարել դիտարկվող հիմնախնդրի շրջանակներում: Այս իմաստով բարձր է աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակությունը: Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք և պարունակում է տեսամեթոդական լուրջ հիմքեր: Աշխատանքում հեղինակն օգտագործել է հարուստ վիճակագրական բազա և վերջին տարիների տվյալներ, ինչը նույնպես բարձրացնում է աշխատանքի արժեքը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, որոնք հրատարակվել են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կատարված է պատշաճ գիտական մակարդակով, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀՈՒՄԱԽՈՍ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Ղարիբյան

Պարոն Գ. Ա. Ղարիբյանի
ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Լ. Ս. Հովսեփյան
03.02.2020 թ.